ԵԱՀԿ երևանյան գրասենյակ

Լրատու

No. 5 Օգոստոս 2012

Ժողովրդավարական ընտրությունների խթանում. 2012թ. խորհրդարանական ընտրություններ

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար դեսպան Անդրեյ Սորոկինը և ՀՀ ԿԸՀ-ի նախագահ Տիգրան Մուկուչյանը ընտրությունների արդյունավետ վարչարարությունը խթանելու վերաբերյալ համագործակցության համաձայնագիրը ստորագրելիս (ԵԱՀԿ/Գոհար Ավագյան)

Համագործակցություն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ

ԵԱՀԿ երևանյան գրասենյակն աշխատել է Հայաստանում ժողովրդավարական ընտրությունների խթանման ուղղությամբ՝ սկսած 2000թ. իր դռները բացելու օրվանից: Միջազգային չափանիշների և լավագույն փորձի հիման վրա գրասենյակի աջակցությունը այս տարիների ընթացքում բազմազան ձևեր է ընդունել, և արդյունքում բարելավվել է օրենսդրությունը, կատարելագործվել է ընտրություններին առնչվող գործընթացների հետ կապված հանրային իրազեկումը և ավելացել է տեղական դիտորդների մասնակցությունը: 2012թ. գրասենյակը և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) ստորագրեցին հետագա համագործակցությունը ուրվագծող երկարաժամկետ համաձայնագիր, որը ներառում է Եվրոպական միության աջակցությամբ 1.7 մլն եվրո արժողությամբ ծրագրի իրականացում Հայաստանի ողջ տարածքում ընտրությունների հետ կապված օգնության մի շարք գործողություններում:

Ժողովրդավարական ընտրություններ խթանելու նպատակով՝ ԿԸՀ-ն ստացել է տեխնիկական, կրթական և տեղեկատվական աջակցություն՝ կապված 2012թ. խորհրդարանական ընտրությունների հետ և հետագայում կստանա աջակցություն 2013թ. նախագահական ընտրությունների կապակցությամբ: Մինչ այժմ, ԵԱՀԿ-ի ներգրավման արդյունքում ուսուցանվել են ընտրատեղամասերի գրեթե 14,000 պաշտոնատար անձինք և էապես հզորացվել են ԿԸՀ-ի կարողություններն ու հանրային իրազեկման ու տեղեկատվության խթանման մոտեցումը:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ամրապնդում

Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում ԵԱՀԿ-ն աջակցել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակի կարողությունների հզորացմանը, որպեսզի վերջինս՝ ընդլայնելով իր գործունեությունը, ինչպես նաև աշխարհագրական ծածկույթը, պատշաճ արձագանքի ընտրախախտումներին: Արդյունքում վեց մարզային ՄԻՊ կենտրոններ են բացվել Գավառ, Վանաձոր, Իջևան, Գյումրի, Եղեգնաձոր և Կապան քաղաքներում՝ ապահովելու իրավունքների պաշտպանությունը և ՄԻՊ մատչելիությունը ողջ հանրապետությունում: Մարզային յուրաքանչյուր գրասենյակում աշխատում է երկու իրավաբան և գործավար: Բացի այդ, ԵԱՀԿ-ն աջակցել է թեժ գծի գործունեությանը՝ մարդու իրավունքների ենթադրյալ խախտումները գրանցելու համար և ձևավորել արագ արձագանքման խմբեր՝ իրավական խորհրդատվություն ապահովելու քաղաքացիների կանչերին նախընտրական քարոզարշավի և ընտրությունների ընթացքում:

Ընտրական գործընթացների լուսաբանման մոնիտորինգ

Ժողովրդավարական հասարակություններում ԶԼՄ-ները նախընտրական քարոզարշավի ընթացքում ընտրողների հետ շփվելու հիմնական շարժիչ ուժն են քաղաքական մարմինների համար: Լրատվամիջոցների արդարացի և ընդգրկուն միջավայրի ապահովման հարցում, մոնիտորինգը, հատկապես ընտրությունների ժամանակ, չափազանց կարևոր է: Որպես հաշվետվողականություն ամրապնդելու միջոց՝ գրասենյակն աջակցել է տեղական կազմակերպություններին վերջին ընտրությունների լուսաբանման մոնիտորինգի հարցում: Երևանի մամուլի ակումբի (տեղական ՀԿ) միջոցով դիտարկվել ու ներկայացվել են նախընտրական ժամանակաշրջանին նախորդող ու պաշտոնական քարոզարշավի ընթացքում հեռուստաալիքների գործունեության արդյունքները, իսկ Հասարակայնության հետ կապերի հայաստանյան ասոցիացիա ՀԿ-ն հետևել է 2012 թ. մայիսի 6-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների լուսաբանմանը տպագիր մամուլում: Բացի այդ, ապրիլի 2-3-ը գրասենյակը «Իրավունքի Եվրոպա միավորման» հետ համատեղ լրագրողների համար կազմակերպեց դասընթացներ ընտրությունների ընթացքում պատասխանատու, ճշգրիտ և հավասարակշռված լուսաբանման թեմայով:

Վերը նշված գործողությունները մաս են կազմում 1.7 մլն եվրո արժողությամբ ԵԱՀԿ-ին Եվրամիության կողմից տրված ֆինանսական աջակցության, որի ծրագիրը սկսվել է հունվարին՝ նպատակ ունենալով խթանել Հայաստանում 2012 և 2013 թթ. ընտրական գործընթացները:

ԵԱՀԿ գործող նախագահն այցելում է Հայաստան



Նախագահ Սերժ Սարգսյանը ընդունել է ԵԱՀԿ գործող նախագահ Էյմոն Գիլմորին (ՀՀ նախագահի գրասենյակ)

Հունիսի 11-ից 12-ը ԵԱՀԿ գործող նախագահ, Իռլանդիայի փոխվարչապետ և Արտգործնախարար Էյմոն Գիլմորը Հարավային Կովկաս կատարած իր այցի ժամանակ այցելեց Հայաստան: Երևանում գործող նախագահը հանդիպեց Նախագահ Սերժ Սարգսյանի, ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի, ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների հետ: Հանդիպումների ընթացքում Գործող նախագահը քննարկեց ԵԱՀԿ-ի և նրա հաստատությունների հետ Հայաստանի համագործակցությունը, կարևորեց Հայաստանում գրասենյակի գործունեությունը և ընդգծեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հետ կապված Մինսկի խմբի գործընթացը: Գործող նախագահը նաև այցելեց ԵԱՀԿ երևանյան գրասենյակ և հանդիպեց աշխատակիցների հետ:

Աջակցություն քրեակատարողական ոլորտի բարեփոխումներին

Պայմանական վաղաժամկետ ազատման համակարգի բարեփոխումը և պրոբացիոն համակարգի ստեղծման ուղղությամբ աշխատանքը հանդիսանում է ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարական ծրագրի մի մասը: Գրասենյակը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի հետ միասին աջակցել է պետական այս բարեփոխումների գործընթացին՝ դատական անկախության ոլորտում առաջարկություններ տրամադրելով և իշխանություններին իր օժանդակությունն է առաջարկել հաստատվելուց հետո դրա իրականացման գործում:

ԵԱՀԿ աջակցությամբ վաղաժամկետ ազատման համակարգի վերաբերյալ ուսումնասիրության շնորհանդեսի մասնակիցները, Երևան, 2 մարտի 2012թ. (ԵԱՀԿ/Գայանե Տեր-Ստեփանյան)

Գրասենյակը նաև աջակցել է Հայաստանում պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համակարգին նվիրված հետազոտության իրականացմանը, որը պատրաստվել է Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ-ի կողմից, իսկ հետազոտության հիմնական արդյունքներն ու առաջարկությունները քննարկվել են մարտին տեղի ունեցած կլոր սեղանի ժամանակ: Հետազոտությունը վերլուծում է Հայաստանի օրենսդրությունը՝ ելնելով միջազգային չափորոշիչներից և լավագույն փորձից և ներառում է փորձագիտական հարցումների արդյունքներ և առաջարկություններ հսկողության մեխանիզմների, պայմանական վաղաժամկետ ազատման նշանակման և վերացման մասին որոշում կայացնելու հիմնական սկզբունքների և չափորոշիչների վերաբերյալ:

Դրանից հետո գրասենյակը և Քաղաքացիական հասարակության ինստիտուտ ՀԿ-ն ապրիլին կազմակերպեցին աշխատաժողով պրոբացիայի միջազգային չափորոշիչների և ԵԱՀԿ մասնակից պետությունների լավագույն փորձի վերաբերյալ: Աշխատաժողովում մանրամասնորեն ներկայացվեց պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների տեսլականը Հայաստանի պրոբացիոն ծառայության վերաբերյալ: Գրասենյակը Հունգարիայի պետական կառավարման և արդարադատության նախարարության հետ համագործակցությամբ ավելի ուշ կազմակերպեց չորսօրյա ճանաչողական այց ուսումնասիրելու Հունգարիայի պրոբացիոն ծառայության գործառույթներն ու կազմակերպման եղանակները: Ճանաչողական այցին մասնակցեցին ՀՀ արդարադատության նախարարության, Քրեակատարողական վարչության և Իրավաբանական դպրոցի ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

Երիտասարդ օրինախախտների կրթում և մասնագիտական ուսուցում

Հունվարին ներկայացվեցին ազատազրկման մեջ գտնվող անչափահասների համար կրթության և մասնագիտական ուսուցման մատչելիության ու որակի վերաբերյալ ուսումնասիրության արդյունքները: Այս ուսումնասիրությունն իրականացրել էր «Սոցիալական արդարություն» ՀԿ-ն՝ գրասենյակի աջակցությամբ: ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչները քննարկեցին Աբովյանի քրեակատարողական հիմնարկի անչափահասների համար կրթության և մասնագիտական ուսուցման բարելավման առաջարկությունները:

ՀՀ արդարադատության նախարարության հետ համագործակցության շրջանակում գրասենյակը նաև աջակցել է հմուտ ձեռքերի դասընթացների անցկացմանը Աբովյանի քրեակատարողական հիմնարկի դատապարտված անչափահասների համար: Այս նախաձեռնությունը օգնել է քրեակատարողական ծառայության աշխատակիցներին, որպեսզի երիտասարդ հանցագործներին պատրաստեն կրկին կյանք մտնելուն՝ անցկացնելով հատուկ հմտությունների դասընթացներ այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են փայտագործությունը և խեցեգործությունը, որպեսզի ազատ արձակված անչափահասները գումար աշխատելու հնարավորություն ունենան:

Մարտին գրասենյակը նաև աջակցեց երեխաների համար բարենպաստ արդարադատության չափանիշների վերաբերյալ աշխատաժողովի անցկացմանը՝ ելնելով նոր մշակված Քրեական դատավարության օրենսգրքից: Այն կազմակերպվել էր ՄԱԿ-ի երեխաների հիմնադրամի, «Միջազգային բանտային բարեփոխումներ» կազմակերպության և Քաղաքացիական հասարակության ինստիտուտի կողմից:

Հայաստանում աջակցություն է ցուցաբերվում տեսչության բարեփոխումներին

Գրասենյակը աջակցություն է ցուցաբերում Տեսչության բարեփոխումների միջգերատեսչական խորհրդին: Խորհուրդը ստեղծվել է 2011թ. և դրա նախագահը ՀՀ վարչապետն է. այն բաղկացած է համապատասխան պետական մարմինների ու գործարար միավորումների ներկայացուցիչներից: Ընդհանուր առմամբ, Տեսչության բարեփոխումների միջգերատեսչական խորհրդի նպատակն է նվազեցնել Հայաստանի վերահսկիչ 26 մարմինների պահանջներն ու երկարատև ստուգման ընթացակարգերը: Գրասենյակը՝ միջազգային այլ կազմակերպությունների հետ համատեղ, որոնցից են Համաշխարհային բանկը ու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, աջակցում է խորհրդի գործունեությանը:

Համայնքային ոստիկանության համաքաղաքային մեկնարկը Երևանում

Գրասենյակը շարունակում է աջակցել համայնքային ոստիկանության մոդելի ներդրմանն ու իրականացմանը՝ փորձելով բարձրացնել ժողովրդավարական ոստիկանության փորձը Հայաստանում: Ծրագիրը սկսվել է մի քանի տարի առաջ՝ Երևանի Արաբկիր համայնքում համայնքային ոստիկանության ստեղծմամբ: Այս ծրագրի հաջողության արդյունքում համայնքային ոստիկանությունը հունիսի 1-ից պաշտոնապես ընդունվեց որպես գործելաոճ ողջ Երևան քաղաքի համար: Նախատեսվում է ողջ քաղաքում ստեղծել համայնքային ոստիկանության ստորաբաժանումներ՝ մոտ 300 ոստիկաններով: ԵԱՀԿ գրասենյակը այս տարվա սկզբին նաև աջակցել է այս աշխատանքում ներգրավված ոստիկանների համար երեքշաբաթյա ինտենսիվ գործնական ուսուցման անցկացմանը:

Ուսուցողական դասընթացները աջակցում են ոստիկանության հասարակական կարգի պահպանման կարողություններին, Երևան, 27 ապրիլի 2012թ. (Գայանե Տեր-Ստեփանյան)

Կիբերանվտանգությունը քննարկվել է Երևանում տեղի ունեցած երկօրյա աշխատաժողովի ժամանակ

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար, դեսպան Անդրեյ Սորոկինը, ՀՀ ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմի ղեկավար Արտաշես Ավոյանը կիբերանվտանգության հարցերին նվիրված երկօրյա աշխատաժողովին, Երևան, 24 մայիսի 2012թ. (ԵԱՀԿ/Գայանե Տեր-Ստեփանյան)

Կիբեր, տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների անվտանգության հետ կապված գլոբալ խնդիրները քննարկվեցին մայիսին Երևանում տեղի ունեցած երկօրյա աշխատաժողովի ժամանակ: ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ Հայաստանի Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի և Նյու Յորքի պետական համալսարանի Ալբանիայում ԱՄՆ համալսարանի կողմից կազմակերպված միջոցառումը նպատակ ուներ ընդլայնելու համագործակցությունը կիբեր և ՏՀՏ անվտանգությամբ ու կիբերհանցագործություններով զբաղվող ազգային մարմինների և միջազգային դերակատարների միջև:

Մասնակիցները խոսեցին քաղաքական գործընթացների վրա սոցիալական ցանցերի ազդեցության, սոցիալական ցանցերում անվտանգության և անձնական տվյալների գաղտնիության խնդիրների, կենսական ենթակառուցվածքների, անձնական տվյալների գաղտնիության և անվտանգության քաղաքականության սպառնալիքների, ինչպես նաև դատաբժշկական վերլուծության տեխնոլոգիական և իրավական այնպիսի ասպեկտների վերաբերյալ, ինչպիսիք են դատաբժշկական ցանցային փորձաքննությունը, էլ.փոստով և ինտերնետով հետքեր գտնելը, անլար ու ոչ ավտոմատ կերպով իրականացվող դատաբժշկական փորձաքննությունը:

Կազմակերպվեց հատուկ նիստ նվիրված էլեկտրոնային անձնագրերին, քանի որ Հայաստանը նախատեսում է տարվա վերջում ներդնել կենսաչափական անձնագրեր: Աշխատաժողովին մասնակցում էին ՀՀ հարկային պետական ծառայության, ՀՀ ոստիկանության Անձնագրերի և վիզաների վարչության, Վիեննայում գտնվող ԵԱՀԿ քարտուղարության անդրազգային սպառնալիքների դեմ պայքարի բաժնի, մասնավոր հաստատությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և գիտակրթական հաստատությունների ներկայացուցիչներ:

Գրասենյակը նախատեսում է 2012թ. օգոստոսին նաև աջակցել տեղեկատվական անվտանգության վերաբերյալ երեքշաբաթյա դասընթացների անցկացմանը Ակադեմիայի ուսանողների և կառավարության պաշտոնատար անձանց համար:

Գրասենյակն աջակցել է Կայուն զարգացման կենտրոնին, որը տրամադրում է բնապահպանական փորձաքննություն

2012թ. մարտին Երևանի պետական համալսարանի երկրաբանության և աշխարհագրության ֆակուլտետի հետ համագործակցությամբ հիմնադրվեց երկրաբանության և աշխարհագրության ֆակուլտետի Կայուն զարգացման կենտրոնը: Կենտրոնի նպատակն է բարձրացնել իրազեկությունը ՄԱԿ-ի կայուն զարգացման աշխատանքների վերաբերյալ, ինչը նպաստում է զարգացման էկոլոգիապես կայուն կառավարման սկզբունքների ձևավորմանը: Այստեղ ներգրավված են համալսարանի աշխատակիցները և այն օգնում է զարգացման հետ կապված բնապահպանական տարբեր թեմաներով փորձաքննության տրամադրմանը՝ նպատակ հետապնդելով հզորացնել կառավարության և քաղաքացիական հասարակության կարողությունները: Կենտրոնը նաև ծառայում է որպես ռեսուրս կենտրոն՝ աջակցելու ոլորտի հետազոտողներին:

Աշխատաժողով դատական ատյաններում երրորդ կողմի մասնակցության վերաբերյալ

Հունիսին գրասենյակը ՀՀ Փաստաբանների պալատի հետ համատեղ շուրջ 25 իրավաբանների և իրավապաշտպանների համար կազմակերպեց երկօրյա աշխատաժողով սահմանադրական և մարդու իրավունքների միջազգային դատավարություններում երրորդ կողմի մասնակցության (amicus curiae) վերաբերյալ: Դրա նպատակն էր է՛լ ավելի բարելավել դատական համակարգի արդյունավետությունը՝ ներկայացնելով իրավական փաստարկներ, թե ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ գործը այն անձանց համար, ովքեր գործի կողմ չեն հանդիսանում: Արդյունքում, մի խումբ իրավաբաններ, ընտրված գործերի վերաբերյալ կկազմեն «amicus curiae» համառոտագրեր, որոնք կներկայացվեն ՀՀ սահմանադրական դատարան և Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Ոստիկանության բաց դռների օրեր Հայաստանի մարզերում

ՀՀ ոստիկանության բարեփոխումների գործընթացն ընդլայնելու նպատակով գրասենյակը ՀՀ ոստիկանության և «Իրավական հետազոտությունների ազգային կենտրոն» ՀԿ-ի հետ համատեղ կազմակերպեց «Ոստիկանության բաց դռների օրեր» ոստիկանության Արմավիրի, Արարատի, Տավուշի, Շիրակի և Արագածոտնի մարզային վարչությունների բաժիններում: Միջոցառումների նպատակն է ավագ դպրոցների աշակերտներին ծանոթացնել ոստիկանության աշխատանքի և գործառույթների հետ: Դպրոցականներն այցելեցին ոստիկանության բաժինները, ծանոթացան պաշտպանության հատուկ միջոցներին և երթևեկեցին ոստիկանական մեքենաներով: Բացի այդ, անցկացվեցին ինտերակտիվ դասախոսություններ ու տրամադրվեց տեղեկատվություն ոստիկանության նպատակների ու գործունեության, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի հետ կապված խնդիրների, թմրամոլության և կոռուպցիայի վերաբերյալ՝ իրազեկությունը բարձրացնելու նպատակով: «Ոստիկանության բաց դռների օրերը» լուսաբանվում են տեղական հեռուստաալիքներով, և աշակերտները կիսում են իրենց տպավորությունները՝ պատրաստելով հոդվածներ դպրոցի տեղեկագրի ու սոցիալական ցանցերի համար:

«Ոստիկանության բաց դռների օրերը» նպաստում են ոստիկանության և հասարակության միջև վստահության բարձրացմանը մարզերում (ԵԱՀԿ/Լաուրա Հայրունի)

ՆՈՐ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ազգային փոքրամասնությունների իրավունքներ

Ապրիլի 27-ին կազմակերպված աշխատաժողովի ժամանակ գրասենյակը ներկայացրեց ազգային փոքրամասնությունների իրավունքների վերաբերող փաստաթղթերի ընտրանին: Հայերեն թարգմանված ժողովածուն պատրաստվել է ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության ու ՀՀ ԱԳՆ հետ համագործակցությամբ և ներկայացնում է ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող քաղվածքներ ՀՀ օրենսդրությունից, Հայաստանի կողմից վավերացված միջազգային պայմանագրերից և խորհրդատվական բնույթի փաստաթղթերից: Վերջիններս ներառում են նաև Ազգային փոքրամասնությունների հարցերով ԵԱՀԿ գերագույն հանձնակատարի առաջարկությունները: Ազգային փոքրամասնությունների համայնքների, ՀՀ Նախագահի աշխատակազմի, ՀՀ ՄԻՊ գրասենյակի և ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող պետական այլ մարմինների ներկայացուցիչներ քննարկեցին քաղաքական գործիչների, լրատվամիջոցների և լայն հասարակության շրջանում ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին իրազեկության ամրապնդմանն ուղղված հետագա միջոցառումները: Աշխատաժողովի մասնակիցները նաև քննարկեցին փոքրամասնությունների լեզուների գործածումը վարչական իշխանությունների հետ հաղորդակցվելիս, փոքրամասնությունների իրավունքների մասին իրազեկության և բարելավված օրենսդրության և պրակտիկայի հարաբերակցությունը, ինչպես նաև ՀՀ ՄԻՊ գրասենյակի դերը՝ որպես փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության կարևոր միջոց: Հունիսի 12-ին, գրասենյակը Եվրոպայի խորհրդի հետ համատեղ նաև աջակցեց Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի իրականացման երրորդ մոնիտորինգային շրջափուլի համատեքստում՝ ՀՀ ԱԳՆ նախաձեռնությամբ իրականացվող հանդիպման անցկացմանը:

Ուղեցույց համայնքային ոստիկանության մեջ ներգրավված ոստիկանների համար

Գրասենյակն աջակցել է համայնքային ոստիկանության մեջ ներգրավված ոստիկանների համար ուղեցույցի պատրաստմանը: Այս ուղեցույցը մշակվել է համայնքային ոստիկանության փորձագետի կողմից, որը գրասենյակի կողմից հրավիրվել է, որպեսզի անցկացնի ուսուցում և մշակի հասարակական կարգի պահպանման ու համայնքային ոստիկանության մասին համապատասխան փաստաթղթերը: Գրքույկը նախատեսված է որպես դյուրօգտագործելի գործիք, որը ներառում է Հայաստանի համայնքային ոստիկանության համատեքստում ոլորտի միջազգային լավագույն փորձը հասկանալու գործնական օրինակներ:

Թրաֆիքինգի դեմ պայքարի ուսումնական ձեռնարկ

Փետրվարի 10-ին գրասենյակը ներկայացրեց իրավապահ մարմինների աշխատակիցների համար մշակված՝ թրաֆիքինգի դեմ պայքարի դասընթացների համապարփակ ձեռնարկը: Ձեռնարկը պատրաստվել է ազգային չորս փորձագետների կողմից և Եվրոպական միության ֆինանսավորմամբ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ու Աշխատանքի միջազգային կազմակերպության համատեղ տարածաշրջանային բազմամյա ծրագրի մաս է կազմում: Ազգային փորձագետների նույն խմբի 2011թ. պատրաստված ուսուցման մեթոդաբանության ձեռնարկն օգնեց Հայաստանի իրավապահ մարմինների կրթական հաստատություններն ապահովել թրաֆիքինգի դեմ պայքարի ուսուցողական նյութերով:

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ/ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

Ուսանողները խթանում են կոռուպցիայի դեմ պայքարը

Մայիսի 10-ին, առցանց/սոցիալական լրատվության մրցույթի հաջող ավարտից հետո, գրասենյակը կազմակերպեց մրցանակաբաշխություն՝ կարևորելու բուհերում կոռուպցիայի դեմ պայքարի խթանումը: Միջոցառմանը, որը կազմակերպվել էր գրասենյակի հակակոռուպցիոն ուսանողական աշխատանքային խմբի հետ համատեղ, մասնակցում էր մոտ 30 հոգի: Հակակոռուպցիոն ուսանողական աշխատանքային խմբի Facebook-յան էջի “like”-երի քանակի հիման վրա առավել շատ ձայներ հավաքած չորս աշխատանքների հեղինակները կարճ ներկայացրեցին իրենց աշխատանքները և ստացան վկայագրեր ԵԱՀԿ-ի կողմից:

Հակակոռուպցիոն ուսանողական մրցույթի աշխատանքներից մեկը, հեղինակ՝ Հասմիկ Տոնապետյան, 3-րդ տեղի մրցանակ

Գենդերային հավասարության խթանումը Հայաստանում

Փետրվարի 10-ին Բրիտանական խորհրդի, Երևանում Մեծ Բրիտանիայի դեսպանատան, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և այլ աջակիցների հետ համատեղ գրասենյակը կազմակերպեց լրատվամիջոցների չորրորդ ամենամյա Նա/Նե մրցանակաբաշխությունը՝ նպատակ ունենալով խթանել Հայաստանում կանանց խնդիրների և կանանց հաջողությունների մասին լուսաբանումը: Մրցույթին ներկայացվել է ավելի քան 225 հայտ 136 լրատվամիջոցների, լրագրողների և այլ կազմակերպությունների կողմից: Ընտրող հանձնաժողովը, որ բաղկացած է լրատվամիջոցների, քաղաքացիական հասարակության և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներից, ընտրեց լավագույն աշխատանքները հեռուստատեսության և ռադիոյի, տպագիր, առցանց, բլոգային, ֆոտո լրագրության և սոցիալական ու առևտրային գովազդներ անվանակարգերում:

Նա/Նե լրատվամիջոցների ամենամյա մրցանակաբաշխությունը խթանում է ՁԼՄ-ներում գենդերային հավասարությունը, Երևան, 10 փետրվարի 2012թ. (ԵԱՀԿ/Գայանե Տեր-Ստեփանյան)

ԵԱՀԿ մասին

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը՝ ԵԱՀԿ-ն գործում է հանուն 56 մասնակից պետությունների կայունության, բարօրության և ժողովրդավարության՝ համընդհանուր արժեքների շուրջ քաղաքական երկխոսության և գործնական աշխատանքների միջոցով՝ հետամուտ բարելավմանը:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը հիմնադրվել է 2000 թվականին օժանդակելու Հայաստանին ԵԱՀԿ առջև բոլոր երեք ուղղություններով՝ ռազմաքաղաքական, տնտեսական և բնապահպանական և մարդու իրավունքների ոլորտներում ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Հավելյալ տեղեկությունների համար դիմել ԵԱՀԿ երևանյան գրասենյակ՝ Սունդուկյան 64/1, հեռ. 229610/11/12, էլ. փոստ՝ yerevan-am@osce.org, կայքէջ՝ http://www.osce.org/yerevan: